



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ


ԻՆՉՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բարելավել ձեր քվեարկության փորձը այն դարձնելով ավելի մասշտաբային և հարմար: Քվեաթերթիկը (ները) ավելի հեշտ կլինեն կարդալը և ավելի հեշտ կլինի ձեր ընտրություն կատարելը: 2018 թվականի նոյեմբերի 6-ին կայանալիք ընդհանուր ընտրությունները կլինեն առաջին ընտրությունները, որոնք ընտրողները ստացան փոստով քվեարկության նյութերը:

ԻՆՉ ՏԵՍՔ ՈՒՆԻ ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ (VBM) ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ


Փոստով քվեարկության քվեաթերթիկների (VBM) նյութերը ամբողջ երեսով մեկ գրված քվեարկության քարտեր են, որոնք պարունակում են քվեարկության բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Նայած ընտրության չափից և ընտրաթերթիկի վրա մրցույթների քանակից Փոստով քվեարկության քվեաթերթիկների (VBM) փաթեթը կարող է պարունակել մի քանի քարտեր՝ առջևի և հետևի մասերում նշված մրցույթներով (տես՝ աջ կողմում նմուշը):

Եթե դուք ընտրական նյութերը պահանջում եք անգլերենից բացի մեկ այլ լեզվով, դուք փոստով քվեարկության քվեաթերթիկը (VBM) ստանալու եք պահանջված լեզվով, ինչպես նաև անգլերեն հեռապատճեն, որոնք կոգնեն ձեզ քվեարկության ժամանակ:



ՈՐՔԱՆ ՆԱՄԱԿԱՆԻԾԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՄ՝ USPS-Ի ՄԻՋՈՑՈՎ ԻՄ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ոչ մի: Փոստային առաքումը նախապես վճարված է Լոս Անջելեսի վաչաշրջանի բոլոր փոստային քվեարկության ընտրողների համար:



ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ՎԵՐԱԳՂԱՐՁՆԵԼ ԻՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ

Լրացված VBM քվեաթերթիկը կարող եք մեզ վերադարձնել ԱՄՆ փոստային ծառայության (USPS) միջոցով՝ Փոստային առաքում հարկավոր չէ: Եթե կցանկանաք այն ուղղակի մեզ հանձնել, դուք կարող եք այն թողնել հանձնման որևէ վայրում կամ քվեարկության որևէ վայրում: Ինչ ձևով էլ այն վերադարձնեք, մի մոռացեք ստորագրել ու թվագրել ձեր վերադարձի ծրարը:

ԵՐԲ ԿՍԿՍՎԵՆ ԱՌԱՔՎԵԼ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ

Մենք սկսում ենք առաքել VBM քվեաթերթիկները ընտրությունների օրվանից 29 օր առաջ: Այն քվեարկողներն, ովքեր գրանցվել են որպես մնայուն VBM, կսկսեն ստանալ իրենց քվեաթերթիկները առաքվելուց մի քանի օր հետո: Մեկ անգամյա խնդրանքներն ամեն օր կնշակվեն և պետք է ստացվեն խնդրանքից մի քանի օր հետո:

ԻՆՉԻ ԿԱՐԻՔՆ ԸՆԴՈՒՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ VBM քվեաթերթիկները պետք է լրացվեն սև կամ կապույտ թանաքով:

ԻՆՉ ՏԵՍՔ ՈՒՆԻ ՆՈՐ VBM ԾՐԱՐԸ

VBM ծրարները, որոնք թողարկվում են Los Angeles վարչաշրջանի գրառումներ պահողի գրասենյակի կողմից, ներառում է ծրարի դիմաց հետևյալ ծանուցումը. Պաշտոնական ընտրության փոստ, որը լիազորված է ԱՄՆ փոստային ծառայության կողմից: Բացի այդ, դուք կտեսնեք վարչաշրջանի կնիքը բոլոր ծրարների վրա: Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք VBM-ի մասին, խնդրում ենք զանգահարել 1-800-815-2666, տարբերակ 2:





ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈՒՆՈՒՄ ԿՆՏԱՐ

ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ՊՐԴՅՈՒՐ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԵՄ ԲՈՒՆՈՐ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՔԱՐՏԵՐԸ, ՈՐՊԵՍՉԻ ՀԱՇՎԱՐԿՎԵՆ ԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

▲ Մենք խորհուրդ ենք տալիս վերադարձնել բոլոր քվեաթերթիկների քարտերը: Այնուամենայնիվ, չվերադարձված քվեաթերթիկների քարտերը որեւէ կերպ չի ազդի այն քարտերի վրա, որոնք դուք ուղարկել եք:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ԵԹԵ ՎՆԱՍԵԼ ԿԱՄ ԿՈՐՑՐԵԼ ԵՄ ԻՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՔԱՐՏԵՐԸ

▲ Եթե Դուք վնասեք կամ կորցնեք մեկ կամ մի քանի քվեաթերթիկի քարտեր, դուք կարող եք փոխարինող նյութեր խնդրել ընտրությունների օրվանից մինչև 7 օր առաջ: Եթե փոխարինում խնդրեք, մենք ձեզ լրիվ նոր VBM փաթեթ կուղարկենք: Եթե ընտրությունների օրվան 7 օրից պակաս է մնացել, խնդրում ենք զանգահարել մեր գրասենյակ (800) 815-2666, տարբերակ 2:

ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ԽՆԴՐԵԼ

▲ Դուք կարող եք VBM քվեաթերթիկ խնդրել առցանց՝ LAvote.net հասցեով կամ լրացնելով և վերադարձնելով նմուշ քվեաթերթիկի գրքույկի հետևի կազմը Los Angeles վարչաշրջանի գրառում պահողի գրասենյակ:

ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԽՆԴՐԵԼ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ԱՆՎԼԵՐԵՆԻՑ ԲԱՅԻ ԱՅԼ ԼԵՉՎՈՎ

▲ Մեկ այլ լեզվով ընտրական նյութերը խնդրելու համար զանգահարեք Los Angeles վարչաշրջանի Գրառումներ պահողի բազմալեզու սպասարկման բաժին՝ (800) 815-2666 հեռախոսահամարով, տարբերակ 3:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ VBM ՆՅՈՒԹԵՐԻ ԻՄ ԱՌԱՋԻՆ ՓԱԹԵԹԸ, ԵԹԵ ԽՆԴՐԵԼ ԵՄ ՆՈՐ ՓԱԹԵԹ

▲ Գրեք «Void» (Անվավեր) բոլոր հին նյութերի վրա և թափել աղբը:

ԻՆՉ Է ՊԱՏԱՀՈՒՄ, ԵԹԵ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԾՐԱՐԻ ՎՐԱ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ ԿԱՄ ԱՅՆ ԶԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԱՐԽԻՎՈՒՄ ԳՏՆՎՈՂԻ ՀԵՏ

▲ Los Angeles վարչաշրջանի գրառում կատարողի գրասենյակը փոստով ձեզ կուղարկի չստորագրված քվեաթերթիկի երդման ձև, որպեսզի լրացնեք ու ստորագրեք: Դուք ընտրությունների օրվանից հետո կունենաք մինչև 8 օր՝ ձևաթուղթը մեր գրասենյակ վերադարձնելու համար, որպեսզի ձեր քվեաթերթիկը հաշվարկվի:

ԿԱՐՈՂ ԵՄ ՀԵՏԵՎԵԼ ԻՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՀԵՏՔԵՐԻՆ

▲ Այո, ինչպես և մեր ներկա VBM գործընթացում, քվեարկողները կարող են առցանց հետևել իրենց քվեաթերթիկների հետքերին LAvote.net կայքէջում:

ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԿ ՆՈՐ VBM ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Այցելեք

▲ VSAP.lavote.net՝ նոր VBM փորձառության մաս կազմող հետազոտության ու նախագծի մասին ավելին իմանալու համար:

